

ԱՅԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Ի Ս Լ Ա Ն Տ Ա



ՅՍ խեղճ և հեռաւոր կղզւոյն անունը գրած կամ լսած ժամանակ՝ կարծես ամէն մարդ կը տխրի . սակայն այնքան տխուր և եզական զեղեցիկութիւն չ'ունի՝ կը հրապուրէ զմարդ իւր փառաւոր յիշատակներով, իւր պատերազմողաց և քերթողաց անկապուտ պարծանքով . բայց նա այժմ՝ կը թափառի ձմեռնային երկայն գիշերներու ստուերաց մէջ, որ անշուշտ իւր խեղճ բնակչաց համար յաւիտենական կը թուի . կամ հիւսիսայցի կարմրագոյն փայլը՝ կը խառնուի իւր հըրարդխաց բոցերուն հետ, մինչ անշուծանելի սառնամանեաց ջօտի մը կը պատէ իւր խորշաձև կողերն և անզթաբար կը բաժնէ զայն յաշխարհէ : Յարդ իսկ աւառան երկար օրերուն՝ կ'եռայ կեանքն իսլանտայի մէջ, թէպէտ խեղճ կղզին իւր անցեալ փառքէն և պայծառութենէն շատ ինկեր է, և տիտանեան անգաւդար պատերազմ մը կը մղեն իր դէմ հրաբուխները : Գաղղիական, անգղիական, դանիական շատ նաւեր՝ յորս կտրիճ և յանգուզն նաւատիներ տարւոյն մեծ մասը կ'անցունեն՝ այս կղզւոյն վտանգաւոր և փոթորկալից եզերաց վրայ կը շրջին որսալով, կամ ծովախորշի մը մէջ խարխիսի նետած՝ անշարժ կը կենան . սուներուն մէջ զարգարուն պատուհաններու առջև՝ տեղւոյն աղջկունք Հոլանտայէն կամ Տանիմարգայէն եկած ծաղիկները կը խնամեն ամենայն սիրով . խեղճ գիւղերու զարոցաց, Ռայքաւիքի բարձրագոյն զարոցին, և աղջկանց ուսումնարանաց մէջ՝ մեծ անյագութեամբ կը սորվին աշակերտք և աշակերտուհիք այն աւառան ինչ որ իրենց կղզիէն դուրս Եւրոպայի վրայ կը խօսի : Կը ջանան որ ամէն քաղաքացի կղզւոյն սակաւաթիւ և եզական ճարտարագործութեանց պարապի . առանձնացեալ պօեթսաներոս մէջ՝ ուր խառն կը բնակին գիւղացիք և ձկնորսք, երկար և տաժանելի ձմեռան համար՝ անթիւ և անտանելի նեղութեամբք պաշար կը պատրաստեն . իսկ ընդհակառակն զեղեցիկ եղանակին զեղեցկագոյն աւուրց մէջ՝ կը տեսնուին կղզւոյն յատուկ փոքրիկ և զեղեցիկ ձիերու խումբք, որ ճանապարհորդները կը փոխադրեն 'ի տես և յայցելութիւն զարմանալի էկսէրնէրու, Հէզլայի և կամ Ալմաննակեա (Almannagjá) պատմական հովտին՝ ուր երբեմն 'ի ժողով կը գումարէին կղզւոյն մեծամեծներն և ժողովրդեան երեսփոխաններն :

Այն օրերուն մէջ՝ բաց օդայ մէջ են պաճարներն և ձիերը . լաւաներու վրայ բուսած խոտերը կը ճարակին . թռչուններն անթիւ բազմութեամբ տնն և այ-

լանցակ ժայռերուն վրայ կը հանգչին. լոյսը կը տոբի յաւիտենական ձեռնց և ստոնամանեաց վրայ, և երբ վերջալուսոյ յետին նշոյլները կը միանան արշալուսոյ նախկին նշոյլից հետ՝ ձեռն կամ ստուերու վրայ ծիածանի ամէն գոյներն 'ի միասին կը շողշողան :

Ամառը՝ երբեմն երբեմն Ռայքավիթի նաւահանգիստը կը մտնեն անգղիական, դանիական և գաղղիական շոգենաւք. այս նաւերը կղզոյն մայրաքաղաքը հասնելու համար ո՞ գիտէ որչափ վտանգներ անցուցեր են ստլանտեանի մրրկկայից ալեաց վրայ և կամ խիտ և մթապատ մշուշներու մէջ. և վերջապէս երբ դրօշին պարգած կը մտնեն 'ի նաւահանգիստ՝ ցնծայից և ուրախայի ընդունելու լուծիւն մը կը գտնեն. վասն զի ոչ միայն անձկացեալ և հարկաւոր վաճառները կը բերեն, այլ նամակներ, լրագիրներ, յԱնգղիա, 'ի Գաղղիա և 'ի Գերմանիա հրատարակուած նոր գրքեր, որոց անհամբերութեամբ կըսպասեն իսլանտայիք՝ որ մեծաւ մասամբ կըթեալ են :

Իսկ ձմեռ աստեն՝ այս ամէնը կ'ընդհատի. նաւահանգստին մէջ խառնեալ դրօշակազարդ նաւերն այլ ևս չեն տեսնուիր. կանայք որ ամառը իրենց ճերմակեղէնը լուալու կ'երթան տաք ջրոց աղբիւրները՝ իրենց խրճիթը քաշուած իւղի փոքրիկ ճրագի մը լուսով՝ իրենց ցնցոտիներն կը կարկատեն. զեղեցիկ և բազմեքանգ ծաղկունք, որ շատ կը նմանին Ալպեանց վրայ գտնուածներուն՝ չորացած քարաքոններու և ձեամբ ծածկեալ հողոյ տակ թաղուած են, և այլ ևս չեն անցնիր կողերուն քովէն յորձանքէն մղեալ Սառնակոյաները. որ ահագին մեծութեամբ սառուցի կառներ են, որոց վրայ ստեղծ սպիտակ արջեր ևս կը տեսնուին : Գեղեցիկ ջրվէժներն և սահանքները՝ կը լռեն այս եղանակին և անշարժ են. հիւսիսային սառուցեալ հովը որ կը յուզէ զստլանտեանն, և Նորւեկիոյ միջին անտառները մոլեգնութեամբ կը տատանէ, ամենէն զօրաւոր նաւերը կը ջախջախէ և աւազոյ բլուրներ կը բարձրացնէ, այս հովը՝ ջրոյ սահանաց զահալէժ ընթացքը արգելլով՝ բարձրաբերձ ստոնապատ սիւներ, ահաւոր կամարներ, անթիւ և գեղեցիկ շթաքարեր կը ձևացնէ գիշերային մթութեան մէջ, մերկ լաւային կամ լեռանց լեռի կողերու վրայ : Չմերային խոր լուծիւնը՝ միայն հրաբխոց սպառնական բոմբիւններէն, փոթորկին ահաւոր և քստմեռի սուլելէն, և կամ սառնատանց մէջ բացուած նորանոր պատուածոց աղաղակէն կ'ընդհատի : Թիւնկիւլլա լիճը բոլորովին ոռոած է, և ձիւնը որպէս զի բոլորովին անհետ ընէ զայն՝ ահագին լեռ մը ձևացուցած է վրան. այն ժայռերը՝ որոց վրայէն հին ժամանակ յանցատուները կը զահալիժէին, և պաշտալայրը՝ ուր բազմութիւն ժողովրդեան ներկայ կ'ըլլար այս բարբարոսական հանդէսներուն՝ այժմ բոլորն ալ ձիւնապատ են և թաղեալք ստանամանեաց մէջ : Ասա կը լսուէր երբեմն ծովուց թագաւորին՝ Վիքինկի գոռձայնը, որ յետ յանգուցն արշաւանաց և զԵրրօպոս զօղանցելու՝ յաղթական երգ մը և կամ նոր օրինաց պատուէր մը կը լսեցնէր. և եթէ հրաբուլխներու ծուխն և բոցը չբարձրանար 'ի վեր այս եղանակին՝ իրաւամբ կարելի էր ըսել, որ Իսլանտա մահու անապատ թաքաւորութիւնն է. և կամ

փառաւոր եւ անագին զերեզմուն մը, առանց ծաղիկ եւ լուռոյ, ուր թաղուած են ընդ միշտ՝ իւր ղիւցազանց եւ քերդողաց ազնիւ սիրտերը: Թէ՛ հարուստ եւ թէ՛ աղքատ տները կը մոռնէ սաստիկ ցուրտը. վասն զի որչափ ալ զգուշութիւն ըլլայ՝ հիւսիսային հուլը միշտ ամէն ծակէ ներս կը թափանցէ, եւ խեղճ կղզին փայտէ բոլորովին զուրկ է: Ս սոնցնող ցուրտը՝ չի թողուր իշխանապետը որ երկար ատեն աշխատին. ձմեռը շատ կը քնանան, եւ յօժարութեամբ ծանր վերմակներու-տակ կը կենան՝ սպասելով որ անցնի սիւսը: ձմեռը: Շատ անգամ՝ ձիերը եւ պանարները իրենց անձուկ ակոտին մէջ կը սառնին: Նաւերը չեն կրնար կղզւոյն եզերաց մօտենալ, եւ իսլանտացիք բոլորովին կը դադրին քաղաքականացեալ աշխարհի հաղորդակցութենէն: այն ատեն եթէ կարելի է ըսել, անցեղոյն մէջ կ'ապրին, իրենց հին երգերը քառասպելները եւ ղիւցազանց պատմութիւնները կարդալով:

Իսլանտայի վիճակը ժ. դարէ՞ մինչեւ ցԺԿ շատ ծաղկեալ էր, եւ իւր դրաւոր աշխատութիւնը՝ որոց վրայ զրեթէ բովանդակ ժողովուրդը կ'աշխատէր՝ յիրաւի շատ զարմանալի եղանակ: Այս բանս ոչ միայն իւր բնակչաց գործունէութեան, քաղութեան եւ հանճարոյն արգասիք եղաւ, այլ նաեւ 'ի շնորհս այն ժամանակ վայելած մասնաւոր պայմանաց:

Այս կղզւոյն բնակիչք տասներորդ դարուն ելան մեկնեցան 'ի Նորուեկիա-յէ, վասն զի տեսան որ կը տարածուի անոյ իրենց անխախտ պահած քրիստոնէական հաւատոց դէմ՝ նորանոր եւ ստապատիր վարդապետութիւններ. եւ չուզելով հրաժարիլ իրենց դաւանութենէն՝ նոր հայրենեաց մը 'ի խնդիր ելան. և ուզեցին փառաւոր հասարակապետութիւն մը հաստատել Էլիւ-լէնտ երկրին մէջ, որ 874ին գտնուէր էր Նորուեկիացի երկու արքայերուց ձեռքով: Այս Նորուեկիացիք որ արհամարհեաւ եւ թողուցեր էին իրենց հայրենիքը՝ նշանաւոր եւ հաւուստ անձինքներ ալ ունէին իրենց զլուխ՝ որոնք վարժ էին թշնամեղն եւ կամ հիւսիսային ծովուց մրկիաց դէմ՝ ճակատելու. իրենց մէջ կը գտնուէին նաեւ շատ քերդողներ, որոնք թէպէտ սուր եւ վահան ալ չարծել աղէկ գիտէին՝ բայց ազգու խօսքերով կը հռչակէին իրենց նախնեաց քաջագործութիւնքն, սկսնախ-նաւեան աստուածոց եւ ղիւցազանց գործերը: Հասարակապետութիւնը տիրեց յիսլանտա գրեթէ երեք հարիւր տարի. այն ժամանակները այս խեղճ կղզւոյն եզերաց վրայ, որ այժմ կարծես մոռցուեր է յայնարհ եւ իր օրէնքներն եւ կառավարողներն հեռաւոր Տանիմարգայէն կ'ընդունի, կը ժողովուէին զեղեցիկ եղանակին քաջքն անուանեալ վիքէնք, որ հեռաւոր աշխարհակալութիւններէ կը գառնային հարուստ աւարով, նորանոր նիւթ մատակարարելով իսլանտական քնարին եւ գրականութեան. եւ կամ կը մեկնէին օտար նաւերն եւ թշնամի երկրաց դէմ՝ հաւաք յարձակումներ ընելու համար: Այս կղզւոյն եզերքներէն դարձեալ կը մեկնէին փորձ եւ հմուտ վաճառականներ կամ յանգուզն գաղթականներ, որ անխախտ ամենեւին՝ իրենց նաւերուն ցառկը կ'ուղղէին լանծանօթ ծովերու ընդարձակութեան մէջ, եւ կըրօնլանտիոյ կամ ամերիկեան այլ երկիր-ներու եզերքը կը շրջէին:

Շարունակելի